# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

/արտաքին աուդիտ իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար իրականացվող հրապարակային մրցույթի/

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 92 հոդվածի, ինչպես նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») Խորհրդի 07.02.2012թ. որոշմամբ հաստատված ««ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ «կանոնակարգ») պահանջների.

Ընկերությունը հայտարարում է արտաքին աուդիտ իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության բաց մրցույթ (այսուհետ՝ «մրցույթ»), Ընկերության 2012 թվականի ֆինանսա-տնտեսական գործունեության ամենամյա արտաքին աուդիտ իրականացնելու նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներին՝

- աուդիտորական կազմակերպությունն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և/կամ միջազգային ճանաչում (հեղինակություն).
- առկա է առնվազն 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ (ընդ որում, 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող (ըստ եկամտաբերության, կատարված աշխատանքի ու հաճախորդների ծավալի լավագույն 10 աուդիտորական կազմակերպությունների շարքից) աուդիտորական կազմակերպությունների վրա).
- առկա է աուդիտ իրականացնող խմբի ղեկավարի, աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման բարձր մակարդակ և աշխատանքային փորձ:

Մրցույթն անցկացվելու է Ընկերությունում՝ ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեում:

Մրցույթի հայտերն ընդունվում են Ընկերությունում՝ մինչև 2012 թվականի մարտի 7-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից մինչև ժամը 18:00, առձեռն կամ փոստային ծառայության միջոցով:

Մրցույթի հայտերով ներկայացվող տեղեկությունների և փաստաթղթերը կարող են լինել ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն և անգլերեն լեզուներով: Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և լիազոր անձի կողմից ստորագրված երկու ծրարներով՝ մեկական բնօրինակ և կրկնօրինակ: Բնօրինակի և կրկնօրինակի վրա գրվում են համապատասխանաբար «Բնօրինակ» և «Կրկնօրինակ» բառերը, միաժամանակ, մրցույթի հայտի առաջին ծրարի վրա պետք է գրվեն մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի անվանումը, «մրցույթի պայմաններ», «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» արտահայտությունները, մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները: Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա պետք է գրվեն մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի անվանումը, «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» արտահայտությունը, մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպությունը ներկայացնում է՝

ա/ մրցույթին մասնակցելու հայտի առաջին ծրարով՝

- մրցույթի մասնակցի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.
- լիցենզիայի ռեկվիզիտները.
- աուդիտի ընդգրկման բնագավառները.
- տվյալ կազմակերպության կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.
- աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.
- ներկայացուցչությունների, մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների առկայության վերաբերյալ տեղեկություն.
- աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակի և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.
- աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները:

բ/ մրցույթին մասնակցելու հայտի երկրորդ ծրարով՝

- աուդիտորական ծառայության մատուցման արժեքը՝ ներառյալ հարկերը.
- այլ ծախսերը:

Մրցութային հանձնաժողովը մինչև մրցույթի հաղթողին ճանաչելու օրը, անհրաժեշտության դեպքում, մասնակիցներից կարող է պահանջել ներկայացնելու լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

Ընկերությունը պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների կատարած ծախսերի համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:

Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը կարող են փոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի հետ վերցնելն ու փոփոխումը կատարվում է կանոնակարգով սահմանված կարգով:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվում են մրցութային հանձնաժողովի հատուկ նիստում՝ 2011 թվականի մարտի 7-ին, ժամը 18:00, ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեում: Մրցույթային առաջարկությունները գնահատելիս, առաջինը բացվում է աուդիտորական ծառայության տեխնիկական կողմին վերաբերող առաջարկությունները: Եթե առաջին փաթեթում ներառված տեխնիկական առաջարկությունները բավարարում են կանոնակարգով սահմանված պահանջներին, ապա բացվում է երկրորդ փաթեթը: Հակառակ դեպքում, մրցութային առաջարկությունը համարվում է մերժված:

Մրցութային հանձնաժողովը ամփոփված մրցութային հայտերը 15 օրյա ժամկետում տրամադրում է Ընկերության Խորհրդին, որի հիման վրա Ընկերության Խորհուրդն ընտրում է առաջարկված մրցութային պայմաններից լավագույնը և Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացնում է առաջարկություն՝ մրցույթի հաղթողին որոշելու և Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին հաստատելու համար: Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին հաստատելու մասին որոշումը կայացնում է Ընկերության Խորհրդի առաջարկությունը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում:

Աուդիտն առնվազն պետք է ընդգրկի՝

- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը՝ ԼՂՀ, ՀՀ և միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան,
- Ընկերության կողմից հարկային պետական ծառայություն ներկայացվող հաշվետվություն-ների արժանահավատության ստուգումը:

Աուդիտի աշխատանքներն են՝ Ընկերության արտաքին աուդիտի անցկացումը, այնուհետև «Աուդիտորական եզրակացություն»-ը և «Նամակ ղեկավարությանը» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով (միևնույն իրավաբանական ուժ ունեցող) փաստաթղթերի պատրաստումն ու ներկայացումը, ոչ ուշ քան 2013 թվականի ապրիլի 01-ը:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի թեկնածությունը հաստատվել է Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովում:

Հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպության հետ՝ նրա կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում, Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր կկնքվի՝ 1 (մեկ) տարի ժամկետով, Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին հաստատելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 20 (քսան) օրյա ժամկետում:

Մրցույթի ընթացքում ծածկագրեր չեն կիրառվում:

Մրցութային հայտեր ներյացրած անձինք կանոնակարգին կարող են ծանոթանալ և/կամ կանոնակարգի պատճեն անվճար ստանալ Ընկերությունից՝ ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25ա հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25ա,
Հեռախոս.՝ (0479) 94-28-58,
Էլ.փոստ՝ artsakhhek@mail.nk.am
Ինտերնետային կայք՝ www.artsakhhpp.com